

# ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
խաւքանչիւր բառին 2 կոպէկ.  
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Մենք անմահ ենք մնացել.—նե՛րֆին Տե-  
ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ընտանեկան վաշխառու-  
ներ. Արժանի էք միմեանց. Նամակ Ալեքսանդ-  
րօպօլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-  
ԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին  
լուրեր.—ՀՆԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱԾՏԱՐԱՐՈՒ-  
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Խրի-  
մի ափերից.

## ՄԵՆԴ ԱՆՄԱՍՆ ԵՆԴ ՄՆԱՅԵԼ

Ներկայ ամսուվայ ընթացքում Կովկա-  
սում պէտք է կատարվեն մի քանի գիտ-  
նական հետազոտութիւններ: Իւրիքի Տա-  
մարանի ասիական Կ. Ֆերիկով յանձն  
է առել ուսումնասիրելու Կազստանի հո-  
ղային շերտերը և լրացնելու Արիւնի, Շեդ-  
րենի և Բարբատ-Գորնի հետազոտու-  
թիւնները: Պրոֆեսոր Վ. Իօսկանով կը  
շարունակի իր երկու տարի առաջ սկսած  
հետազոտութիւնները և կը կազմէ Կով-  
կասի հողային քարտէզը: Պրոֆեսոր Մուշ-  
կետով կը հետազոտէ Ախալքալաքի գա-  
ւառի երկրաշարժից մնացած տեղերը և  
շրջակայ ուրիշ հետաքրքրական կէտերի  
հողային կազմութիւնը: Գեօլոգիայի դօկ-  
տոր Պ. Պետրոսիկով կուսումնասիրէ Կով-  
կասեան շրջայի մի մասը, որ գտնվում է  
Վլադիկապլայից դէպի արեւմուտք: Հետազո-  
տութեան կենտրոնակէտ Կովկասի կից գտնվող  
Արալ-Կասպեան երկրորդ արեւելքում և Կրիմի  
թերակղզին հիւսիսարեւմուտքում: Մրա-  
զրված են նաև բուսաբանական ուսումն-  
ասիրութիւններ Կովկասի լեռնային շրջ-  
քաններում:

Այդ տեսակ բոլոր հետազոտութիւնների  
մէջ չը կան կովկասցիներ, կամ եթէ պա-  
տահոմ են, միայն իբրև բացառութիւն-  
ներ, որոնք յանձնաքն դէպք պատկանելի  
տեղ չեն գրաւել մեր երկրի գիտական  
ուսումնասիրութեան գործում: Մինչև  
այժմ մեր երկրի յուրյ ուսումնասիրու-  
թիւնը կատարվում է օտարների ձեռքով:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԱՄԱՅԵՆԻ ԽՐԻՍՏԻ ԱՓԵՐԻՑ

I  
Դէպի հարաւ  
Все живо тамъ, все тамъ—  
очей отрада... Пушкинъ

Ի զուր չէ, որ Խրիմի թերակղզին ուսա-  
նուած ամենագեղեցիկ անկիւններից միւն է  
համարվում: Ստեփանը, կարծես, իր բոլոր չը-  
նորն ու բարիքները ամենայն առատութեամբ  
թափել է այստեղ: Հարաւի կապուտակ երկինքը,  
արեւի կենդանաբար շողերը, թարմ օդը, առատ  
բուսականութիւնը, մի կողմից դալարալից  
լեռների գաղափարված անաւ մրգեղէնի և խա-  
ղողի պղծեղանքներով, ծաղկեղէնի պարտէզնե-  
րով, միւս կողմից լայնատարած ծով՝ մերթ  
անդորր, մերթ աղմկող, տեղ-տեղ քնկալալի,  
տեղ-տեղ ծառակիթիթ ափերով... Բնութեան  
այդ հրաշալիքները ուղղակի մարդու սիրտ են  
թուլում, աչք փաղաքում: Այստեղ են խոնջա-  
ցած մարմինն է ոյծ ու թարմութիւն գգուն,  
են ժողով տրամադրութիւնն է զուարթանում,  
են ցաւազար կուրծքն է ազատ շնչում: Այս-  
տեղ վերանորոգվում, այստեղ վերածնվում են...

Եւ ահա այդ է պատճառը, որ ամեն տարի,  
մասնաւոր այս ժամանակներին, երբ ամեն ինչ  
այստեղ ծաղկելու և փթիկելու վրա է, Ռու-  
սաստանի բոլոր անկիւններից հազարաւոր  
մարդիկ՝ ծեր ու ջահիլ, կին ու աղջիկ՝ դիմում  
են դէպի հարաւագործ Խրիմը: Դրանցից ոմանք  
գալիս են բուժվելու այն սոսկալի ափերից, որ  
բարակացաւ անունն է կրում և որի գէտ ան-  
շուր մաքրում է դեռ մինչև օրս բժշկական

Իսկ հայրենի երկրի երիտասարդները կամ  
անպատրաստ են գիտնական ուսումնասի-  
րութիւններ անելու համար, կամ ծուլա-  
նում են այդ տեսակ աշխատանք սկսելու  
և կամ բոլորովին զուրկ են գիտնական  
հետաքրքրութիւնից: Թէ զարմանք և թէ  
սարսափ է պատճառում մեր կրթված  
դասակարգի այդ տեսակ անտարբեր և մինչև  
մեռելութիւնը հասած սառն վերաբերմուն-  
քը դէպի մի այնպիսի գործ, որ պէտք է  
հետաքրքրէր կրթված կովկասցուն և  
թանգ լինէր նրա սրտի համար:

Մենք դժբաղդութեան մէջ է մեր եր-  
կիրը, որի որդիքը չեն ցանկանում նրան  
ձանաչել, նրան ուսումնասիրել, նրա բնա-  
կան հարստութիւնները չափազործել,  
պաշտպանելով երկրի օգուտները ազգա-  
բնակութեան համար: Մեր մի գարի  
կուսուրական կեանքը, քաղաքակրթու-  
թեան հետ շփման մի քանի տասնեակ  
տարիների փորձերը չը կարողացան արտա-  
դրել գիտնական ոյժերի մի այնպիսի  
ստույգ խումբ, որ մշակէր երկրի յուրյ  
ուսումնասիրութեան մի ամբողջ ծրագիր  
և սխտեմական կերպով իրագործէր այդ  
ծրագիրը: Զէ, դեռ շատ ենք անպատրաստ  
և յուրյ գործերի համար դեռ անընդու-  
նակ ենք: Մենք դեռ ապրում ենք ֆրազ-  
ների և ցանկութիւնների շրջանում, իսկ  
նրանց իրագործութիւնը մեզ թւում է  
տաղտկալի և ձանձրալի:

## ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Մ Ա Մ Ո Ւ Լ

Ժամանակակից հայկական կեանքն էլ, ան-  
շուշտ, կունենայ իր պատմութիւնը, թէև դա  
լոկ կենդանական կեանք է, իդէալներից և ո-  
գեւորութիւնից զուրկ, խեղդված ձանձալի  
բորբոսների մէջ, ենթակրկած լեթադգիայի  
Պատմագիրը, նպելով մեր օրերին, չը պիտի  
կարողանայ չը նկատել յետադիմական, խաւար  
հոսանքների ջանքերը. օրինակ, հէնց այն, որ

գիտութիւնը, ոմանք—ծովի կաղզուրիչ ջրերում  
ամբարձնելու իրանց խանդավառ նեարդերը. ո-  
մանք—ուղղակի հանգստանալու ողջ տարվայ  
ծանրաբեռն աշխատանքից. ոմանք էլ, ուսու-  
նալով, օրէ ոչոքի ճիշտ, թէ ֆ անկու, պա-  
րապ—սարապ այս ու այն կնոջ յետևից քաշ  
գալու... Վերջին դասակարգին պատկանում  
են նրանք, որոնք մի առանձին ընդունակու-  
թիւն ունեն չը դադար կամ հնչող դա-  
դար փողեր չալլելու...

Քմահած բաղդը ինձ էլ նետեց այս կողմը  
խանդավառ առողջութիւնս վերականգնելու:  
Ըստ ամբողջականի մուլ՝ ու մայլ էր Մոսկ-  
վայի երկինքը, խոնավ ու անձրևային—եղա-  
նակը, երբ ես ապրիլի սկզբներին ճանապարհ  
ընկայ դէպի ջրմաշունչ հարաւ. Երկաթուղու  
արընթաց գնացքը երկու օր ու գիշեր նետի  
պէս ճեղքելով լայնատարած դաշտերը, մեզ  
հասցրեց Սեւաստօպօլ: Այդ ձիւղ ուղին, պէտք  
է ասած, ոչ մի հետաքրքրական բան չէ ներ-  
կայացնում: Դաշտեր, ուսուական անվերջ, ան-  
ծայր դաշտեր, որոնց անքնան երգել են ուս  
բանաստեղծները: Այդ դաշտերը տեղ-տեղ դեռ  
ծածկված են ձիւնէ սփռողով, իսկ տեղ-տեղ չը  
են ցամաք՝ սոսալին նուազ թէպէտ գրաւում  
են մարդու աչքը իրանց լայնարձակ տարածու-  
թեանը, բայց չուտով նրանց միակերպութիւնը  
ձանձրացուցիչ է դառնում և աչք յոգնեց-  
նում:

Ուրիշից այս կողմը արդէն զգալի էր հա-  
րաւի շունչը: Երկինքը հեղհեղեղ բացվում էր,  
օդը մեղմանում, այստեղ-այնտեղ երեւում էին  
դեռաբողբոջ դաշտ, կոկոնադաղձ ծառեր ու  
թփեր: Վազօնում իմ դիմաց նստած էր մուլ  
ակնոցներով մի մաշկադէմ, միջին տարիքի  
ուսու պարոն, որն ամբողջ ճանապարհը քիթը  
կրիած ճիւղեցողքի մէջ՝ ձայն չէր հանում  
ձկան պէս լուռ էր: Գարնան հոտը զգալով՝ նա

հայ եկեղեցականութիւնը, տաննակ տարիներ  
ժողովրդական եկեղեցու, ժողովրդի հետ միա-  
ցած գործելու սկզբունքը պահպանուեց և  
զարգացնուեց յետոյ, յանկարծ հասկացաւ, որ  
ժողովրդական լինելով՝ չէ կարելի կազմել կղե-  
րականութիւն միջնադարեան դիրքով, այսինքն  
տիրելու, Վիպելու և արձակելու իշխանու-  
թեամբ: Եւ ահա այդ դժբաղդ հակադրու-  
թեան հետեւանքները. ջնջվում է ընտրողական  
սկզբունքը, որ դարերից ի վեր գոյութիւն ու-  
նէր հայերի մէջ, և մինչդեռ ուրիշ ազգեր  
(օր. ուսմանը) աշխատում են ընտրված քա-  
հանանի ունենալու հարցը ժողովրդականաց-  
նել, մեր մէջ օր օրի վրա բազմանում են քա-  
հանանի նշանակելու գէպերը: Ընդհանուր  
ձայնաւորութեան տեղ եկեղեցական գործերում  
դարձեալ բացարձակ իշխանութիւն է ստա-  
նում աղայականութիւնը, որովհետեւ նա կա-  
րող է երջանկացնել կղերական գրպաններ իր  
առատ ոսկինքով, եթէ մուրացկանութեան և  
ստոր շողորթութիւնների սխտեմ լաւ գոր-  
ծադրվի: Կատաղի կռիւ է յայտարարվում առ-  
հասարակ գիտութեան և մասնաւորապէս աշ-  
խարհական ուսման դէմ. մտցնվում է սիւլա-  
տական աստուածաբանութիւնը, և միաբնա-  
կութեան ու երկաթականութեան մասին ճարպի-  
կութեամբ ճառող դիպլոմատը տիրացուն  
դառնում է ամենակարող իշխանութիւն, որի  
կամքը, բայց մանաւանդ ինտրիգները, հա-  
պարակից փախցնել են տալիս այն ամեն մարդ-  
կանց, որոնք յանդգնում են մի քիչ աշխար-  
հական, մի քիչ իրական հասկացողութիւն-  
ներ ունենալ: Կղերականութեան այդ կրու-  
ւի մէջ մանաւանդ շատ հարուածներ են  
կրել ընտրիտութիւնը, որ աւանդվում էր  
մեր դպրոցներում: Բնագիտութիւն—սոսկա-  
լի, եօթնյոթնական վիշապ միջնադարեան կաթ-  
ծած կղերի համար: Պատմագիրը կարճա-  
նազել թէ ինչ վայնասուն էր բարձրանում  
մեր մէջ, երբ մի բնագէտ ստանում էր մի որ  
և է դպրոց կառուցակալու պաշտօնը. նա կասէ  
ապագայ սերունդներին, որ մի ամբողջ թեմա-  
կան դպրոց քարոքաբան եղաւ այն պատճա-  
ռով, որ կեւոր ձուկ չէ և բոլորովին չէր կա-

անգամ բացականչեց. «Наконецъ то запашо  
всего!» և «Ուղեցոյցը» բարձի տակ դնելով՝  
դուրս եկաւ դէպի վազօնի տափարակը՝ այն-  
տեղից հիանալու հարաւի ծաղկուն բնութիւ-  
նով:

Սրմֆերօպօլին ձօնեցած՝ որ Խրիմի նախա-  
դուռն է կազմում, ճանապարհորդներս սկսե-  
ցինք բանալ վազօնների լուսամուտները և  
կարօտ աչքով դիտել չորս կողմի կանաչաւուն  
ձորերը, մանիշակապառ բլրակները, բարձրա-  
ւանդակներից հոսող խոխովին ջրերը: Հեռուից  
երեւում էին լեռների ուրուաղները: Որքան  
առանջ, այնքան դալիկ էր դառնում Սեւ ծովը  
մերձաւորութիւնը: Մովը չէր երեւում, բայց  
զգալի էր ծովային օդի չորիչ զովութիւնը: Ա-  
հա և Բաղչասարայի կայարանը, որտեղից  
երկու վերատաշաի հեռաւորութեան վրա գտնու-  
վում է թէ ինքը Բաղչասարայը և թէ Պուլիկի  
երգած յայտնի «Բաղչասարայի պալատը» և մէջի  
«արցունքների շարժումներ»: Դրանց ևս մի ա-  
ռանձին նամակ կը նուրբեմ, եթէ աղողից  
տեսնելու:

Բաղչասարայի կայարանի առաջ ամենից ա-  
ւելի աչքը են ընկնում ծանրաբան շրջող, լայ-  
նավարիք թափարները—այս սիրուն վայրերի  
նախկին տիրակալութիւնը: Ընդհանուր ուշա-  
գրութիւնը գրաւում է մի ալմօրուս, գլուխը  
ձերմակ չաղմայով պատած և եղունգներ ինիս-  
յից կարմրած ձերմակ թափար, որը փառաւոր  
պղպղղել է երկաթուղու տախտակամածի մի  
ծայրում ևս ձեռքով անդադար չիւում է փա-  
ռանդ միջուկը: Երկու կողմից նրան շրջա-  
պատկեն ոտքի վրա կանգնած մի խումբ թա-  
փարներ, որոնք տաքացած խօսում են մի բա-  
նի մասին ուշա չը դարձնելով ոչ աղմուկով  
մօտեցող երկաթուղու գնացքին, ոչ էլ վազօն-  
ներից միջինների պէս դուրս թափվող ձամ-  
բորձների իրարանցումին: Երեւի, պղպղղած

բող Յովնան մարգարէին կուլ տալ, պահել իր  
որովայնի մէջ: Եւ ապագայ սերունդները կար-  
գալով այդ փաստերը, պիտի հասկանան, թէ  
ինչու այսքան տղէտ ու ողորմելի էին մեր վե-  
ղարաւոր ու անվեղար հոգեւորականները, ին-  
չու հայ ժողովուրդը XX դարում անգամ  
մասնաված էր կոյր նախապաշարմունքների, չու-  
նէր զարգացում, տիրացու էր հոգով և մար-  
մնով:

Գիտութիւնների և կրթութեան ժամա-  
նակակից դրութիւնը—ասում է «Русскія  
Вѣд.» լրագիրը, ամենից առաջ մասնաւոր չէ  
անում, որ չէ կարելի միջնակարգ դպրոց-  
ներում անտես անել ընտրիտութեան տար-  
րերը: Առանց ընտրիտութեան հետ ծանօթ  
լինելու դժուար է երեւակայել կրթված մարդ  
XX դարում, ընտրիտութեան տարրերը ան-  
հրաժեշտ են ինչպէս առհասարակ մտաւոր  
կրթութեան համար, այնպէս էլ մասնաւոր-  
ապէս բարձր ուսման պատրաստվելու հա-  
մար: Բնագիտութիւնը այժմ այնպիսի ազ-  
դեցութեան համար, այնպէս էլ մասնաւոր-  
ապէս բարձր ուսման պատրաստվելու հա-  
մար: Բնագիտութիւնը այժմ այնպիսի ազ-  
դեցութեան վրա, նրա դադարաւորները և  
մեթօդները այն աստիճան թափանցում են  
գիտութեան բոլոր ճիւղերի մէջ, նրա գոր-  
ծադրութիւնների հետ այնքան յաճախ ենք  
հանդիպում կեանքի մէջ, որ խորթ մնալ  
մարդկային մտքի այդ փայլուն նուաճումնե-  
րին՝ նրա չը կայ, և ամեն մէկը, որ ձեզ  
ստում է ճշմարիտ զարգացման և լուսաւո-  
րութեան, անհրաժեշտութիւնից դրժված՝  
պիտի ծանօթանայ նրանց հետ, թէ կողմ հէնց  
ինքնակրթութեամբ, հանրամատչելի գրքով-  
ների միջոցով:

Կան, այո, մեծ, անուրանալի ճշմարտու-  
թիւններ, որոնցից չեղելը մեզ ևս յանցանք  
են համարում քաղաքակրթիք, բարեկեցիկ և  
զարգացած ազգերը: Բայց կան և դժբաղդ եր-  
կիրներ, որ ազգէտ առաջնորդները իրանց կաս-  
տայական շահերի համար փակում են ժողովր-  
դի աչքերը, կոյր ու խուլ են պահում նրանց:  
Աշխարհ վաշխում է Էդիսօնի դիւտերի բա-  
րիքները, բայց, օրինակ, մի Տիբեթի բնակիչնե-  
րին ինչ օգուտ որ կան վայելուքներ, կան աշ-  
քաբաց, կենսունակ աղբեր: Այսպէս ենք և  
մենք...

Թուրքը կամ մօլլա է, կամ Բաղչասարայի «աղ-  
տախկալուններից» միւն, որին գանգաւորում  
կամ մի բանի դէմ բողբոքում է թափարների  
խումբը: Արեւելեան այդ բացօդեան, ծիծաղա-  
լար զատաւարութիւնը այնքան է գրաւում  
ուղեւորներին մի քանիսի ուշադրութիւնը,  
որ սխտեմ ենք խմել մօտից մի քանի անգամ  
անցուղարձ անել, դիտել, ակնալ դնել «Աղ-  
տախկալու» դատաւորը լուռ է և միայն խորի-  
մաստութեամբ աչքերն է ճայճացնում: Բայց,  
երեւի, չուտով կը չարժին նրա թոռոմած  
չրթունքները և նա կարծալի իր սողունա-  
կան իմաստուն դատաւիճիւրը, որի առաջ պիտի  
խոնարհվին կարծ-խեղ գանգաւորները...

«Փիւլկա, փիւլկա»... արձատված ուսու-  
նով կանչում են սեւուրիկ թափար-ձուտերը՝  
նոսաբերի և գլխաբաց վազվելով վազօնների  
լուսամուտների առաջ և մանիշակի փնջիկ-  
ներ առաջարկելով ուղեւորներին, մանաւանդ  
կանանց: Անպիտանները կարծես հասկանում  
են, որ ծաղիկն աւելի սիրելի և մօտ է կա-  
նանց սրտին: Իսկ նր պատուհանում գոյգ գը-  
լուս են տեսնում (կնոջ և տղամարդի), իրար  
կպած՝ սիրախառն քնքշութեամբ դուրս նայե-  
լիս, այնտեղից թուրք-թախկալուններն էլ պոկ չեն  
գալիս: Այդտեղ էլ երեւում է նրանց խորա-  
մանկութիւնը: «Բուլի, բարին, քուլի...»  
խօսքն ուղղում են տղամարդին, իսկ մանիշակի  
փնջիկը—կնոջը: Յայտնի է, որ այդպիսի դի-  
պլոմաներում, ինչ ապրանք էլ լինի, հնչող է  
սաղացնել...

Շուտով մեր առաջ կը բացվի Սեւաստօպօլի  
ծովախորշը—ուսուայ պատերազմական այդ  
յայտնի նաւահանգիստը, որի հետ կապված են  
այնքան արիւնալի անցքեր ու աղէտներ...

Ա. Մատուրեան

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՎԱՇԽԱՌՈՒՆԵՐ  
(Նամակ Ախաբաբայի)

Մեր գիւղական կեանքը դեռ չտեսնելի աչքին երեւում է իր նախնի նահապետական պարզ ու անմեղ կողմերով Դեռ չտեսնելի, որոնք աչքով չեն տեսել, իրանց կաշուի վրա չեն փորձել ու լոկ վառ երեւակայութեամբ պատկերացնում են գիւղը, կարծում են թէ այնտեղ թաղաւորում է նախնի նահապետական կեանքը իր բոլոր անդամներու կողմերով, չորը համայնական սեփականութիւն, շատ ընտանիքներ 20, 30, նոյն իսկ 40 անդամից բաղկացած, ապրում են մի յարկի տակ, աշխատում միասին, վայելում միասին, փոքրերն ու կանայք ամօթխած ու պատկառած դէպի տան մեծերը, վերջիններս զթաւառ ու խնամող... Այսպէս չէ՞ք երեւակայում:

Բայց ապա որ դա գիւղի արտաքին խաբուսիկ պատկերն է, որ շարունակ է անփորձ դիտողին: Մտէ՛ք գիւղ, անչէ՛ք նրա ամեն մի խաւը եւ դուք այնտեղ կը գտնէ՛ք նախնի նահապետական կեանքի լոկ աղաւաղված կեղծ պատկերը: Հասարակական ընտրովի պաշտօնականները կաշառակեր, ժողովուրդն անկիրթ, քահանաներն անուս եւ ներշնչված ամեն տեսակ պակասութիւններով, հասարակութիւնը խաղալիք մի քանի վաշխառուների ձեռքին, ընտանեկան արքայներն ու խաղաղ կեանքը խախտված, ժողովուրդը, թէ ընտանեկան, թէ հասարակական կեանքում, բաժանված երկու մասի՝ մէկն աշխատող, միւսն ուտող, մէկը լուռ արիւն քրտինք թափող, միւսը չապլ, վատնող, մէկն աղքատ ու քաղցած, միւսը հարուստ սեփականատէր ու վայելող: Ահա մեր գիւղերի ներկայ իրական պատկերը:

Լրագրութեան մէջ մեր գաւառի վաշխառուների մասին երկար գրվեց, ուստի այդ հասարակական ցեղերը այժմ մի քիչ պոչերն իրանց են քաշել ու առաջվայ պէս էլ երկու կողմից չէ կտրում նրանց թուրը: Բայց մեր գիւղերն ու կան են մի այլ տեսակի ժողովրդական հարստահարիչներ, որոնք սարդի պէս մուծ անկիւններում հիւսած ոտաքնները՝ մինչեւ ուժասպառ անելը ծծում են իրանց միամիտ զոհերի արիւնը եւ մի եւ նոյն ժամանակ ճարպիկ խորամանկութեամբ կարողանում են ծածկել իրանց այդ հրէշային արարքները թէ հասարակութեան եւ թէ կողմնակի դիտողի անփորձ աչքերից: Դրանք ընտանեկան վաշխառուներն են:

Հօր մահվանից յետոյ նրա տեղը բռնում է անդրանիկ որդին, որ դառնում է գերդաստանի լիազօր կառավարիչն ու «մեծը»: Նրա ձեռքովն է անցնում տան երեւուածքը: Գերդաստանի բոլոր անդամները պարտական են իրանց ամեն մի արարքի համար նրան մանրամասն հաշիւ տալ, բայց իրանից ոչ ոք չը կայ հաշիւ պահանջող: Եւ տան «մեծը», օգտվելով այս հանգամանքից, միանգամայն ի չարն է գործ դրում իրան չորոված լիազօրութիւնը եւ միամիտ, տգէտ ստորադասիկների հաւատարմութիւնն ու համբերութիւնը:

Եւ ահա ինչպէս Ընտանիքի մէջ իւրաքանչիւր մայր պարտաւոր է հոգալ իր եւ իր որդիների հագուստի ծախսը, չը նայելով որ ինքն էլ, որդիքն էլ աշխատում են նոյն տան մէջ ու աշխատանքների արդիւնքը յանձնում տան «մեծին»: Ուստի նորահարսը հէնց առաջի որդին ծնելուց յետոյ ստիպված է գլխի ուկիները (զարդեր), կամ գէթ նրանց մի մասը ծախել ու տոկոսով տալ, որպէս զի ազատ գոյնում մերկութիւնը: Տան «մեծին» կինը, իբրեւ գերդաստանի անդամիկ հարսը, ամենից առաջ է ունենում տոկոսով փող, որը գերենական հրաշքով մի քանի տարվայ մէջ հասնում է հարիւրների, յաճախ եւ հազարների: Իսկ ամբողջ «տան», ընդհանուր փողը, կարծես մինքնը ուտում են, հազարից ինչու է հարիւրների եւ շատ անգամ էլ բոլորովին անհետանում է, չորանում: Տան «մեծը» իրաւունք ունի առանց խտրութեան յաճախել ամեն մի հրաւերք ու հարսանիք եւ ծախսել, որքան իր «աղաքէֆն» է ուզում: Իսկ գերդաստանի միւս անդամները, եթէ հազարից մէկ պատահեն էլ որ եւ ինձոյդի մէջ, պարտաւոր են իրանց կանանց փողը ծախսել: Յաճախ մինչդեռ գերդաստանի բոլոր անդամները, կին ու տղայ, դաշտում, կիզող արեւի տակ, արիւնքրտինք են թափում, տան «մեծը» հով չուսքում նստած իր «եարան-եօղաշուն» (ընկերներ) հետ արողի բաժանիկն է շրխկացնում ու միջնադարեան սարկատիւրով պէս մի առանձին գոտիներում պարծնում, «դատողնիս օտաղ ըլլին, խմեցէ տղաք»:

Վերջապէս, տարինը անցնելուց յետոյ, սկսվում է ընտանիքի մէջ խտրութիւն, տըրտունջներ ու մի քանի տարի էլ «մեծ ու ձեռն-կռնի» իրար հետ «եօղաք» գնալուց յետոյ, այլ եւս անկարելի է դառնում միասին ապրել: Փոքր եղբայրները մտածելով, որ բաժանվելով իւրաքանչիւրը իրանցից թէեւ նախնի հարստի հոշակը չեն ունենայ, բայց գոնէ իրանց բաժին հասած մի քանի հազարով էլ կարող են մարդավայել ապրել, պահանջում են բաժանվել: Բայց ինչ է դուրս գալիս: Տան «մեծը» մի առեւտրական եւս հակառակվելով բաժանվելուն, վերջապէս դառնութեամբ յայտարարում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ժողովրդի խօսածը իրանց «կարողութեան» ժամանակ սուտ լուր է, իրանք ոչ միայն «նաղդ փող» չունեն, այլ եւ 600 ռուբլի պարտք ունեն: Ապշուած են գերդաստանի բոլոր անդամները, բայց ինչ կարող են անել խեղճերը. աղաչում, պաղտաւում են իրանց անգութ «մեծին», բայց նրա սիրտը ապուստ քար է, ոչինչ չէ ուզում լսել: Կամ եթէ չափից դուրս «գլխաւոր» է, իր ստեղծած երեւակայական «պարքը» մեծանգութեամբ յանձնառու է լինում: Բաժանելու ատրիներ չարունակ իր առաջ հլու ստորուկի պէս տքնող եղբայրներին մի-մի զոյգ եզ տալով՝ տասնազարանոց օջախից մերկ դուրս է հանում:

Գ. գիւղացի Ա. աղան նոյն իսկ իր 60,000-ի հասնող կարողութիւնից բոլոր եղբայրներին մի քանի եզ ու կով հանելու բաժին, իսկ բոլոր մնացածը ինքը սեփականացրեց, որովհետեւ փոքր եղբայրների աշխատանքով գնած անգործ հողն ու միւս անշարժ կաշքերը, օգուտ քաղելով եղբայրների տգիտութիւնից, հաստատել էր իր որդու վրա, ուստի եւ խեղճ եղբայրներն ուր դիմեցին, ոչինչ չը կարողացան անել զաղան եղբոր անխիղճ հարստահարութեան դէմ: Մի ուրիշ Գ... գիւղացի Դ. աղան, եղբոր մահվանից յետոյ, երբ վերջինիս որդիներն ինքնակալ պիտի ընտրէին, իրանց 20,000-ից աւել կարողութիւնից 200 ռուբլի միայն ցոյց տուեց: Կենդանի փաստեր որքան կամեաք:

Սակայն վերջին տարիներս, գերդաստանի կրտսեր անդամներն էլ, բերաւոր համանման օրինակներից իրատվելով, իրանք էլ սկսել են վաճառք իրանց գլխի ճարտ տեսներ: Տան մէջ ամեն ոք աշխատում է իր սեփական վաստակից գողանալ եւ աւելացնել կնոջ փողի վրա: Տան ամբարից հայն է պակասում, տակաւններից իւրն ու պանիրը, նոյն իսկ հօտի միջից ոչխարը: Եւ այսպէս թէեւ տան մէջ բոլորն աշխատում են միասին ու ըստ երեւութի մի-մի փողով «եօղաք» գնում, սակայն մեծ ու փոքր, կին ու տղայ ամենքն էլ իրանց ձեռքից եկած փողը գողանում, յափշտակում, խաբում, կեղեքում են միմեաներին ու պղծում գիւղական ընտանիքի նախնի նահապետական սրբութիւնն ու պարզութիւնը:

Տարեցտարի քայքայվում, ուժասպառ է լինում գիւղական ընտանիքը, որի հետ կազմալուծվում, այլանդակվում է եւ հասարակական կեանքը: Իսկ այս բոլորի միակ պատճառն է հաշտութեան բացակայութիւնը: Ինչպէս ասումն է ձեռնարկութեան մէջ, նոյնպէս եւ ընտանեկան կեանքում մեր գիւղացիներն անհաշիւ է: Նրա կարծիքով, փոքրը երբեք իրաւունք չունի հաշի պահանջել տան «մեծից», որքան էլ ապօրինի ու աւերիչ լինեն նրա ձեռնարկութիւններն ընտանիքի համար: Այսպիսով մեր գիւղերի ներկայ ընտանեկան կեանքը պատկերացնում է մի անդուպ բռնապետութիւն, որն անհրաժեշտ է կործանել ու փոխարինել ընտանեկան խորհրդակցութեամբ ու իրաւունքների հաւասարութեամբ: Լոկ հաշտութեանում կարող է վերականգնել մեր գիւղական ընտանիքների սրբազնութիւնը՝ պատիւը, ժամանակ է վերջապէս, որ հասարակական վաշխառուների հետ այս ընտանեկան գող հարստատեղն անմեղ զոհերին ու թողնելով իրանց արհեստ դարձած պարագիտութիւնը, ապրեն սեփական աշխատանքով:

Զավանդի

ԱՐԺԱՆԻ ԷՐ ՄԻՄԵԱՆՑ

(Նամակ Նրանից)

Այս երկու բաները կը լսէք այն ամենքի բերանից, որոնք ականապես են մեր հոգեւորականներն եւ մի կարգի աղաների չորջրը անցած դարձածներն: Եւ ինչքան ասէք, որ չեն կատարվում միմեանց արժանի այդ մարդկանց

մէջ: Թայֆաներ կազմել, պատմութիւններ հրարել, մտքեր պղտորել, միմեանց դէմ մեքենայութիւններ սարքել, մի խօսքով միջոցների մէջ խտրութիւն չը դնել գիւղացիներն առաջաւելում համար: Այսպիսի հանգամանքներում հասկանալի է միանգամայն պղտոր ջրում ձուկ որսացողների երեւան գալը, եւ առիթը փառաւոր էր: Ապրիլի 23-ին բաւական չեղ կատարվեց նորակառուց եկեղեցու օծումը: Ներկայ էր ժողովրդի խուռն բազմութիւն. եկեղեցու երեք զոհերի առաջ մոմ վաճառողները համարեա բոլորն էլ երկաստարգ մարդիկ էին. այդ բանը մեզ զարմացրեց, յետոյ իմացանք, որ աղաները խռովել են Նախ՝ որ իրանցից եւ ոչ մէկը չընտրվեց նորակառուց եկեղեցու ժամանակաւոր երէցփոխ, չը նայած որ այդ աղաներից մի քանիսը ընտրված են եղել չիւնութեան հոգաբարձուներ. երկրորդ՝ որ օծման կարգերի մէջ նրանց պաշտօններ չէին արված: Նոյն իսկ երբ աղաները ասում են, թէ իրանց գրպանից փողեր են ծախսել, առաջնորդը վրձնարար է իրանից, որ յետոյ եկեղեցուց ստանայ եւ օծման պատրաստութիւնների հոգատարութիւնը յանձնելով՝ նորընտիր երէցփոխին նշանակում է օծման օրը: Այսպիսի վարմունքը սաստիկ վիրաւորում է աղաներին եւ նրանք խռովում են: Ահա իմ տեղում են երկու կողմերը միմեանց արժանի. այդ աղաները տարիներ չարունակ նոյն առաջնորդի հետ միացած հալածանքներ են հանել երկաստարգական լաւ ձգտողների դէմ, իսկ այժմ նոյն այդ առաջնորդից միջոցներ լինելու համար՝ անցել են մի սեւագլխի կողմը եւ թեւ ու թիկունք դարձել նրան իր մեքենայութիւնների մէջ:

Սկզբում մի խնդր ծագեց առաջնորդի եւ դպրոցի տեսուչ Բենիկ վարդապետի մէջ: Մի մոռացե՛ք, որ երկուսն էլ ունեն կաթողիկոսական իփուստ լի ա զ օ Ր իրաւունքներով: Մինչդեռ սպասվում էր, որ եթէ Կաթողիկոսը գնալիս չը միջամտեց, գոնէ վերադարձին վերջ կը դնէ այս խնդրին, յանկարծ հրապարակ եկաւ խռոված աղաների հարցը եւ Կաթողիկոսն էլ էջմիածին վերադարձաւ Ալեքսանդրապոլի վրայ: Այժմ մէկը միւսի ետեւից էջմիածին են շտապում առաջնորդը, Բենիկ վարդապետը եւ աղաներից մի քանիսը միմեանց գլորելու համար:

Մենք չենք կարող համակրութեամբ չը վերաբերվել երկաստարգութեան բռնած դիրքին: Այս պատկառումների ժամանակ փոփոխակի այս եւ այն կողմի մարդիկ գիմեցին երկաստարգների աշակցութեան՝ ստորագրութեան թիւերի կազմելու համար, բայց երկաստարգները մերթնեցին ասելով՝ «նրանք արժանի են միմեանց», թող տապալեն միմեանց: Եւ բոլոր ժամանակ մնացին ձեռնպահ:

Գ.

ՆԱՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՊՈԼԻՑԻ

Ապրիլի 22-ին

Գուցէ ոչ մի ժամանակ այնքան ընկած չէր մեր քաղաքի մէջ առեւտուրը, որքան ներկայ տարին: Մեր ժողովուրդը ոչ մի ժամանակ այնքան նեղութիւն չէր քաշել, որքան այս ձմեռը. պատճառները շատ են, բայց գլխաւորները սրանք են:

Արդէն չարս հինգ տարի է, որ Շիրակում հացի բերքը նուազ է. ինչն է պատճառը, եւրաշտը մէկ կողմից, ջրանցքների եւ առուների բացակայութիւնը միւս կողմից, աւելացնելով սրանց վրա նաեւ մեր շինականների տղիւտութիւնը եւ երկրագործական կատարելագործված գործիքների բացակայութիւնը—այնա այս ամենը հերիք է, որ քայքային մեր շինականների առանց այն էլ ոչ ապահով անտեսութիւնը: Հացի բերքը երբ նուազ է, գիւղացին ստիպված է լինում կողմնակի աշխատանքների դիմել. դրանք են կամ քաղաքներում օրական որպէս բանւոր աշխատելը, կամ սալապանութիւնը: Քաղաքում գիւղացին աշխատելիս օրական վարձ ստանում է միջին թւով 30—40 կօպ., կամ ամսական 9—12 ռ., նա ծախսում է օրական 15—20 կօպ., կամ ամսական 4—6 ռ., որ ասել է թէ մշակն ամսական կարող է փող վաստակել մինչեւ 4—5 ռուբլի, որովհետեւ ամեն մէջ պատահում են տօն, կիրակի, այլ եւ անհրաժեշտ օրեր, որոնց պատճառով կամ կէս օրական է ստանում, կամ իսպառ գրկվում է իր օրականից: Դառն քրտինքով ձեռք բերած ամսական 4 ռուբլին դարձեալ մեծ բան է մեր շիրակեցի մշակի համար եւ նա գոհ էր, եթէ այդ նուազ աղբիւրը միշտ լինէր, բայց, դժբաղդաբար, նա էլ միշտ չէ ճարվում: Մնում է սալապանութիւնը: Գանի որ երկաթուղին մեր կողմերում չը կար, մեր շինականները

գնում էին Թիֆլիս, Ախալցխա, Գանձակ, Վրահիկավաղ, Աղառաֆա եւ այլն. սալապանները գնում էին միշտ ընկերութեամբ, արտելով, մէկ սալը երկու եզներով կարող էր վաստակել ամսական 15—20 ռ., ծախս կը լինէր 7—12 ռուբլի, ուրեմն զուտ արդիւնք կը մնար մօտաւորապէս 8 ռ. ամսական: Եթէ հաշուեք սալի երկաթների մաշվելը եւ ուրիշ պատճառներ, կը մնայ միայն ամսական 5 ռ. արդիւնք:

Այդ չնչին գումարով գոհ էին մեր շինականները, բայց այդ նուազ արդիւնքն էլ ցամաքեց, որովհետեւ երկաթուղին, կամ ինչպէս գիւղացիներն ասում են՝ «մեծ վիշապը», այնքան բեռ է տանում, այնքան շուտ է գնում առանց յոգնելու, առանց խոտ ուտելու, այնքան է տանում, որ մեր սալապաններն ապշուած հիւսնում են, ուր մնաց թէ նրա հետ մրցեն: Մնում է էլի նախնի հողագործութիւնը կատարելու եւ հող տանել: Այս կէտի մէջ էլ, դժբաղդաբար, գաւառի սակաւահող եւ հողագործի լինելը արդէն վաղուց յայտնի է Նախկին հողագործութեան ստուերին է մնացել, ուրովհետեւ ժողովուրդը տան անգամ չատացել է, իսկ հողը մնացել է մի եւ նոյնը. Նախկին հացաշատ եւ առատ Շիրակը, որ միշտ ցորեն էր արտահանում հազարաւոր պուգրով դէպի Թիֆլիս եւ այլ տեղեր, այժմ ինքն է կարօտ ուրիշ տեղի ցորենին եւ եթէ այս ձմեռ չը լինէր Ռուսաստանի հացը, որ անընդհատ վաճառներով գալիս էր Կերչից, Արմաւիրից եւ Բատումից, ու գիտէ, գուցէ մեզ մօտ հացի պուգը 3—4 ռուբլի լինէր. բարեբաղդաբար, նորիս Ռուսաստանի հացին, մեր քաղաքում հացի գինը 1 ռ. 20 կօպէկից չը բարձրացաւ եւ խեղճ դարձ կարողացաւ ապրել:

Զորքորդ՝ գիւղացու անտեսութեան քայքայման պատճառն է փոխառութիւնայողական բանկերի բացակայութիւնը: Դժբաղդ դէպքերի ժամանակ գիւղացին ստիպված է լինում դիմել գիւղացի կամ քաղաքի վաշխառուներին եւ սարսափելի տոկոսներով փող ձեռք բերել: Թէ ինչ հրէշաւոր տոկոսներ են առնում, եւ թէ ինչ անտեսանքներ են անում, եւ թէ ինչ անտեսանքներ են անում, որ 20, 30, 40, 50% առնելը մեզ մօտ մի սովորական բան է համարվում եւ խեղճ գիւղացին ստիպված է լինում գրել այն, ինչ որ դեռ հրամայում է... այդ դեռերը կան թէ քաղաքում եւ թէ գիւղերում, նրանք կոչվում են աղա, հաշիւաղա, տըր-հայր, արժանապատիւ հայր եւ այլն:

Հինգերորդ՝ գիւղացու անտեսութեան մեծ հարուստ են տալիս գիւղի մէջ կղած արակտիւրները, գինեւորներն եւ խաւութիւնները: Գիւղացի խանութպանը աւելի սոսկալի, աւելի վտանգաւոր է, քան քաղաքում եղածը, որովհետեւ գիւղացին ամեն օր միջոց չէ կարող գտնել գնալ քաղաք խմելու եւ հարբելու, մինչդեռ գիւղի մէջ այդ աւերիչ ըմպելի կայ, ուրեմն չարս աւելի մօտ է, աւելի սերձակալ, աւելի վնասակար է: Ահա մեր շինականների դժբաղդութեան գլխաւոր պատճառներից մէկը: Շիրակեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԵՐ

Եկող 1901 թւին լրանում է Թիֆլիսի քաղաքային ձայնաւորների իրաւասութեան ժամանակը եւ պէտք է տեղի ունենայ նոր ձայնաւորների ընտրութիւն: Քաղաքային վարչութիւնը մշակել է նոր ընտրողական ցուցակներ կազմելու ծրագիրը եւ անհրաժեշտ ծախսերի նախահաշիւը:

«ՀԱՅԿԱՅԷ» լրագրին հետագրում են Ջուլիֆայից, մայիսի 8-ին. «Երեկ երեկոյան ժամը 6-ին նորին մեծութիւն պարսից Շահը ժամանել էր Եւրոպական Ջուլիֆա: Մեծ հանդիսով նրան ողջունեցին տեղական իշխանութիւնները եւ բոլոր անձինք, որոնք ուղարկված են յատկապէս Շահին դիմաւորելու: Վատ եղանակի պատճառով՝ նորին մեծութիւնը ձանապարհ կրկնի Ջուլիֆայից ոչ այսօր, ինչպէս որոշված էր, այլ վաղը, մայիսի 9-ին»:

Նոյն լրագրին հետագրում են Դարաւաղից, թէ պահպանող զինւորների մի խումբ, որ բաղկացած էր 9 հոգուց, Սախկալ գիւղական հանգիստ Գեառ-Մահմեդի աւազակային խմբին եւ հրացանաձգութիւն սկսեց նրա հետ: Պահապան զինւորներին օգնութեան հասան. ս. Յովնանու չու վանքից ուրիշ պահապան զինւորներ տեղափոխեց, որոնք պահապանութեամբ վերաւորված Գեառ-Մահմեդը ձերբակալվեց, կուլին սպանվեց, իսկ մնացեալ երեքը կարողացան փախչել: Սպանվածը ժամանակաւորապէս



